

## ՊԱՏԻ ՍԻՄՎՈԼԻ ԷՔԶԻՍՏԵՆՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ՄԵԿՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Ժ.-Պ. Սարտրի, Կ. Աբեի, Լ. Խեչոյանի և Գ. Խանջյանի  
ստեղծագործություններում\*

**Բանալի բառեր** – պատի սիմվոլ, արքետիպ, կոլեկտիվ  
անգիտակցական, էքզիստենցիալիզմ, միայնություն, ար-  
տուրդ, հուսահատություն, Աստված, անհատականություն,  
համեմատական վերլուծություն:

### Մուտք

«Պատ» բառով կազմված բազմաթիվ դարձվածքները՝ խուլ պատ (ամուր պատնեշ, խոչընդոտ), սառցե պատ (անջրպետ), յոթ պատի հե-  
տևում (թաքստոցում), պատին դեմ առնել (լուրջ խոչընդոտի հանդիպել) և  
այլն<sup>1</sup>, վկայում են հայ մարդու ենթագիտակցության և հայ հանրության  
կոլեկտիվ անգիտակցականի մեջ այս բառ-հասկացության խոր արմա-  
տակալման մասին:

Պատ բառը մեզանում մեծավ մասամբ չի ընկալվում իբրև ֆիզիկական  
իրողություն, այլ առօրյայում և հատկապես գեղարվեստական տեքստում  
վեր է ածվում բազմաշերտ սիմվոլի: Հետաքրքրական է, որ այն որպես  
այդպիսին է դիտարկվում նաև այլալեզու գրականության մեջ, ինչը թույլ  
է տալիս խոսել ոչ թե պատ-սիմվոլի, այլ համամարդկային կոլեկտիվ ան-  
գիտակցականում ձևավորված պատ-արքետիպի մասին՝ հղում կատարե-  
լով **Կ. Գ. Յունգին**:

Կոլեկտիվ անգիտակցականի մասին իր աշխատության մեջ վերլու-  
ծական հոգեբանության հիմնադիրը «արքետիպ» է անվանում հազարամ-  
յակներով կուտակված մարդկության փորձի հիման վրա ձևավորված,  
բյուրեղացած որոշակի պատկերացումները: Այս տեսանկյունից արքետիպի  
արժեք են ստանում ստվերի, մոր, երեխայի, անիմայի, անիմուսի և այլ  
երևույթների մասին պատկերացումները՝ անկախ այդ «կարծրատիպերը»

\*Հոդվածն ընդունվել է տպագրության 20.11.2016:

1 Տե՛ս **Բեդիրյան Պ.**, Հայերեն դարձվածքների ընդարձակ բացատրական բառարան, Եր., ԵՊՀ  
հրատ., 2011, **Գալստյան Ս.**, Հայոց լեզվի դարձվածաբանական բառարան, Եր., Երևանի համալս.  
հրատ., 1975:



րությունը գիտակցած Պարլոն (Ժ.-Պ. Սարտր, «Պատր») բոլորովին այլ հայացքով է նայում աշխարհին. «Ինչպիսի ազահությամբ էի վազում երջանկության, կանանց, ազատության հետևից: Ինչի՞ համար: Ես կամեցել էի ազատագրել Իսպանիան, հիացել էի Պի ի Սարգալով, հարել անարխիստների շարժմանը, ելույթ ունեցել ժողովներում. ամեն ինչ լուրջ էի ընդունել, կարծես թե անմահ լինեի»<sup>5</sup>: Պատր, այսպիսով, իբրև արթնացման՝ ինքնաձանաչման սիմվոլ է հանդես գալիս:

Ինչպես մինչև պատր (ֆիզիկական իրողություն), այնպես էլ պատին (հոգեկան իրողություն) հասնելու համար կերպարները ինքնաբացահայտման ուղի են անցնում: Կերկեգորյան բանաձևմամբ՝ կեցության մի աստիճանից մյուսին, մի վիճակից մյուսին անցում կատարելու համար **հուսահատությամբ պայմանավորված** ցատկ է անհրաժեշտ:

Իսկ ահա Գ. Խանջյանի «Պատր» պատմվածքի հերոսը անձայրածիր, անհաղթահարելի պատին հասնելու ձանապարհին ետևում է թողել օրըստօրե նվազող բոլոր ցանկություններն ու կրքերը «...մանրուք համարելով նույնիսկ այն, ինչ երբեմնի ունեցել է թե՛ իմաստ, թե՛ հմայք»<sup>6</sup>: Այսպիսով, կերպարը խոր հիասթափության արդյունքում վեր է բարձրացել, այդուհետ վերևից է նայում մի ժամանակ խնդություն պատճառող ամեն ինչին: Պատր դառնում է հուսահատված անհատի գիտակից աճի, ինքնահաղթահարման, անցողիկ ցանկացած հաճույք արհամարհելու ցուցիչ:

Գրեթե նույն պատկերն է նաև Լ. Խեչոյանի «Պատր» պատմվածքում: Օգոստոսյան տապից վանքում պատսպարված ուժասպառ խուճրը (Լ. Խեչոյան, «Պատր»), սև մեքենայից դուրս եկած ոստիկանի «Ո՛ր է Դիլաքյանը» հարցին արձագանքելով, սկսում է փնտրել նրան: Երբեմն-երբեմն ուժեղ հարվածի ձայն է լսվում. ինչ-որ մեկը կրկին բախվում էր պատին: Ընկնողը կանգ էր առնում, առանձնանում ամբոխից և արդեն **գիտակցաբար, կամովին**, իբրև իր ընտրությունը կատարած անհատ հետևում մյուսներին. «Առաջիններս ավելի հապշտապ քայլեցինք, հետինները վազում էին, որ մեզ հասնեն: Նրանց վերջից գալիս էր պատին բախվողը: Նա կաղում էր, իսկ մենք նրան չէինք օգնում: Գյուղացի երկու կանայք նրա ձակատին արյուն էին քսել: Պատին բախվողն էլ՝ ձակատին մատղած աքլորի արյունը, շտապում էր»<sup>7</sup>: Պատր, այսպիսով, այն խոչընդոտն է, հուսահատության, հուսալքության սիմվոլը, որ ցնցում է անհատին՝ նպաստելով ինքնաձանաչմանը, նախապատրաստելով կեցության մեկ այլ աստիճանի:

## 2. Պատր՝ իբրև երկու իրականությունների, իրողությունների սահման

Պատր կարելի է դիտարկել նաև որպես երկու իրարամերժ, հակադիր կամ փոխլրացնող իրողությունների սահմանագիծ: Հիվանդանոցի նկուղներից մեկում բանտարկվածներին (Ժ.-Պ. Սարտր, «Պատր») շոշափելի պատն առանձնացնում է դրսի աշխարհից, իսկ անտեսանելի մի պատ էլ

5 Սարտր Ժ.-Պ., Պատր // Էլ. կայք (<http://grapaharan.org/index.php/%D5%8A%D5%A1%D5%BF%D5%A8>), հղման ամսաթիվը՝ 01.09.16:

6 Խանջյան Գ., Շարժասանդուղք, Եր., «Նաիրի» հրատ., 1994, էջ 190-191:

7 Խեչոյան Լ., Փուշը, հայր, փուշը, Եր., «Նահապետ» հրատ., 2011, էջ 126:



է այն, որ խմբով փնտրում են ինչ-որ Դիլաքյանի, ում չեն էլ ճանաչում (կարելի է զուգահեռել Ս. Բեքեթի «Գոդոյին սպասելիս» պիեսի հետ): Ապարդյուն տեղից տեղ են գնում՝ իջևանատուն, եկեղեցու խորան, ուսուցարան և ի վերջո՝ դեպի արևը: Ի դեպ, արևի՝ իբրև կենսարար, կենսատու սիմվոլի մոտ գնալու առաջարկի հատվածում հեղինակային մենք-ը, որով շարադրվում է պատումը, տեղի է տալիս հարցի՝ ինչ-որ մեկը, թե՞ բոլորը մտածեցին. մենք-ը մի պահ տեղը զիջում է Եսին, կամագուրկ կամ ընդհանրական ցանկությամբ առաջնորդվող մենքի մեջ հարցը՝ կասկածը, անհատներ է առանձնացնում: Արևը, հիմնվելով նախնադարյան աշխարհընկալման և աշխարհագագացողության վրա, հաճախ նույնականանում է Աստծո գաղափարի հետ: Հետևաբար՝ դեպի Աստված տանող ճանապարհին է, որ մերկ պատեր էին հայտնվում՝ թեկուզև կարճ ժամանակով խանգարելով տեսնել «հետո»-ն, ճանաչել անձանաչելին:

Առաջին հայացքից նույնպիսի ապարդյուն և անվերջանալի վազք է Լ. Խեչոյանի «Դատախազի թաղումը» պատմվածքում: Թաղման թափորը գլխավոր դատախազին ուղեկցում է գերեզմանատուն, բայց այնտեղ հասնելու հնար չի գտնում. զինվորները, շարունակ ասելով «Պարետային ժամ է», փակում են ճանապարհը, և թափորը ստիպված դեգերում է փողոցից փողոց՝ Բարեկամության, Ազատության, Խաղաղության: Մի կողմ դնելով պատմվածքում արծարծված մարդու ազատության գաղափարը և այլ ենթաշերտեր, որոնց հողվածներում անդրադառնալու առիթներ կունենանք, կանգ առնենք պատի, տվյալ դեպքում՝ ոստիկանական «պատի» հասկացության վրա: Դատախազը պայմանականորեն ապրում է, քանի դեռ այդ պատը չի հաղթահարվել, և չի երևացել դրանից հետո ձգվող անվերջությունը կամ դրա բացակայությունը: Պատը անիմանալին է, նույն ինքը՝ առեղծվածը, անորոշությունը, որ թևաթափում է անհատին:

Ընդհանրության մեջ բոլոր դեպքերում որոնումն ու ձգտումը անիմանալիին բախվելիս հանգեցնում են **գոյության արքությունության, անիմաստության** գիտակցման:

#### 4. Պատը՝ իբրև իրականության անհաղթահարելիության սիմվոլ

Վերոհիշյալ չորս համանուն ստեղծագործություններում էլ պատը հանդես է գալիս նաև իբրև անհաղթահարելի, տեղի չտվող իրականության սիմվոլ, ինչն անսահման հուսահատություն է ծնում: Կերպարները թևաթափ են լինում պատը հաղթահարել չկարողանալու մտքից: Ժ.-Պ. Սարտրի «Պատը» պատմվածքի դատապարտյալներից Թոմը, մանրամասնորեն պատկերացնելով արևածագին սպասվող մահապատիժը, ասում է. «Նրանց (իմա՝ զինվորներին – Ռ. Ո.) կիրամայեն՝ «Նշան ան», ես կտեսնեմ ինձ ուղղված ութ հրացան: Երևի թե ուզենամ պատի մեջ մտնել, ինչքան ուժ ունեմ, մեջքովս պատը կհրեմ, բայց պատը կդիմադրի, ինչպես մղձավանջի ժամանակ»<sup>13</sup>: Ի հակադրություն նրա՝ խանջանական հերոսը Կամյուի ընդվզողի հատկանիշներն ունի՝ հուսահատությունից կամ, որ ավելի

<sup>13</sup> Սարտր Ժ.-Պ., Պատը, նշված էլ. կայք:

վատ է, անհուսությունից ծնված, բայց վերջիվերջո նա էլ է համակերպվում իրականության՝ իր էքզիստենցիալ ճակատագրի հետ. «Երբ վիատությունդ հասավ ծայրագույնի՝ խելացնորի պես սկսեցիր գլխով հարվածել Պատին, գործի դիրք նույնիսկ եղունգներդ, ատամներդ... Սակայն ճակատդ արնոտվեց, եղունգներդ ու ատամներդ փշրվեցին, իսկ Պատի վրա չմնաց գոնե քերծվածք, գոնե խազ»<sup>14</sup>:

Հետաքրքրական է, որ Լ. Խեչոյանի վերոհիշյալ «Դատախազի թաղումը» պատմվածքում պատը հոլովվում է իբրև կայունության խորհրդանիշ, սակայն ուշադիր ընթերցման դեպքում տեսնում ենք, որ նույնպիսի հուսահատության ծնունդ և աղբյուր է միաժամանակ: Անվերջ թափառումներից հոգնած փողային գործիքների թմբկահարը նստում է փողոցի մեջտեղում և հրաժարվում որևէ տեղ գնալուց. «Նրան հորդորում, համոզում էինք, որ բարձրանա, գնանք, կօգնենք: Ասինք. «Թե չէ բոլորիս կպահեն»: Ասաց. «Չէ, սա իմ պատն է, միակն ամբողջ քաղաքում, որ դիմացավ, որ կանգուն է մնացել, ես այս պատից չեմ հեռանա»: «...» Թերահավատները ծաղրում էին, որովհետև փողոցի մեջտեղում նա հենվել էր ինչ-որ երևակայական պատի»<sup>15</sup>: Պատ՝ հենարան, չկա, հետևաբար անխուսափելի է նաև թևաթափությունը: Արտաքին աշխարհի անհուսալիության մեջ համոզվելով՝ սեփական կեցության բեռնան տակ միայնակ կքած հերոսը հենարանընկերոջը, թեկուզև անշունչ, ինքն է հորինում՝ հավատալով դրա գոյությանը և հավատացնելով սյուսների: **Ինքնախաբեությանը** են տառապում նաև Անհայտության պատին գլուխները հպող և այնտեղից լիցք ու կորով ստացող հերոսները (Գ. Խանջյան, «Շարժասանդուղք»): Պատը կրկին հանդես է գալիս իբրև երկու իրողությունների, այս դեպքում՝ ցանկության և իրականության սահմանագիծ, անհամապատասխանության ցուցիչ:

## 5. Պատը՝ իբրև պատնեշ Եսերի միջև

Միայնության դատապարտված մարդն իր ողջ կեցության ընթացքում շարունակաբար, չնչին բացառություններով, մենակությունն է վերընտրում: Այս տեսանկյունից պատը մարդու և մարդու միջև գոյություն ունեցող անտարբերությունն է, դիմացինի ցավը շրջանցելը, երբեմն նաև ակնհայտ թշնամանքը. էքզիստենցիալիստական «թշնամի աշխարհին» մարդը նմանատիպ ատելությամբ է պատասխանում:

Խեչոյանական անանուն և անդեմ հերոսներից ոչ մեկը կարեկցանք չի զգում պատին բախվածի և ընկածի հանդեպ. ուրիշը՝ իբրև Եսի, տվյալ դեպքում՝ Մենքի հակադրություն, մոռացության է տրվում. «Նա կաղում էր, իսկ մենք նրան չէինք օգնում»<sup>16</sup>: Որքան էլ ընդհանուր է բանտը՝ թե՛ նեղ, թե՛ լայն իմաստով, բախտակիցներն իրար ձեռք մեկնելու փոխարեն հակակրում են, ֆիզիկական և հոգեկան գարշանք զգում («...հայացք նետեցի փոքրիկին, տեսա հեծկլտոցից ցնցվող նիհար ուսերը ու զգացի, որ դարձել եմ անգութ: Ես ընդունակ չէի խղճալու ո՛չ ուրիշներին, ո՛չ ինձ»<sup>17</sup>):

14 Խանջյան Գ., նշված աշխ., էջ 192:

15 Խեչոյան Լ., նշված աշխ., էջ 75:

16 Նույն տեղում, էջ 126:

17 Սարսր Ժ.-Պ., Պատը, նշված էլ. կայք:

Պատը՝ Եսի և Ուրիշի միջև անընդհատ ձգվող պատը, հաստանում է, և եթե «շարժասանդուղքին» իրար կողք կանգնածները հասցնում են մտերմանալ, «...միմյանց երբեք լիովին չեն վստահում»<sup>18</sup> (Գ. Խանջյան, «Շարժասանդուղք»):

Պատը լոկ առարկա լինելուց աճում է, վերածվում է հոգեվիճակի և երբեմն նույնականանում է անհատի հետ, դառնում պատնեշ իր և իր միջև. «Պատ, – կրկնեց նա շշուկով, և պատը մշուշի պես սկսեց դանդաղ լցնել նրա կուրծքը»<sup>19</sup>: Հետաքրքրական է, որ պատը, մարդկանց միմյանցից անջատելով, նրանց միացնում է միևնույն ժամանակ: Պատը դրանով էլ «գորեղ» է, քանի որ այն թե՛ իրեն բախվողներն է, թե՛ իր երկայնքով քայլողներն ու հուսահատությանը տրվածները. «Դու ջարդում էիր ոսկորներ, որոնք ինչ-ինչ ժամանակներում քեզ պես քայլել են Պատի երկայնքով և կոխկրտել ուրիշների ոսկորները, վերջիններս էլ, իրենց հերթին, նույնն են արել առավել հեռավոր ժամանակներում...»<sup>20</sup> (Գ. Խանջյան, «Պատը»):

## 6. Պատը՝ իբրև տարածության և ժամանակի չգոյության սիմվոլ

Պատի սիմվոլի՝ ներկա հողվածի շրջանակում քննվող ենթաշերտերից վերջինը թերևս տարածական և ժամանակային անջրպետ լինելն է: «Ժամանակը պատի պես ինձնից թաքցնում էր նպատակը»<sup>21</sup>, – մտածում է իր մեջ ծավալվող դատարկության զգացումից սարսափած հերոսը (Կ. Աբե, «Պատը»): Պատի և ժամանակի համեմատությունը լոկ գեղարվեստական հնարք չէ, այլ տվյալ ժամանակահատվածում, տվյալ տարածքում ինքն իր մեջ բանտարկված լինելը. կապն ինչպես անցյալի, այնպես էլ ապագայի հետ խզվում է, անկարևոր են դառնում անցած կամ անցնելիք հեռավորությունները: Անհատը ոչ միայն վեր է կանգնում այլ Եսերից, այլև իրեն դիտարկում **վերժամանակային, վերտարածական** մի տիրույթում. «Այո, ժամանակն է, որ խոստովանես՝ Պատն անվերջ է: Դեհ, իսկ անվերջության մեջ յուրաքանչյուր կետ միայն կենտրոն կարող է լինել: Ուստի որքան էլ քայլես, որ կողմ էլ քայլես՝ կենտրոնում ես, ասել կուզի՝ անշարժ ես»<sup>22</sup> (Գ. Խանջյան, «Պատը»): Ուշագրավ է, որ անժամանակ և անտուն (ժամանակն ու տարածությունը որքան հստակ, նույնքան էլ անորոշ են) էքզիստենցիալ հերոսի համար ժամանակն իր կրկնությամբ այլևս զուգորդվում է պատկերներից ոչ թե շրջանի, այլ անվերջ ձգվող հորիզոնական գծի (պատի) հետ: Երևույթը չի կրկնվում, ինքն իրեն չի հիշեցնում ցիկլն ավարտելիս, այլ ցանկացած պահ և՛ կրկնություն է, և՛ մինչ այդ չապրված և չապրվելիք իրողություն: Մարդը մենակ է ոչ միայն այլ մարդկանցից իրեն «պատով» սահմանազատելու, այլև տարածական ու ժամանակային «պատերով» բանտարկելու պատճառով:

**Ի մի բերելով վերոգրյալը՝** կարող ենք հավաստել, որ պատի սիմվոլն

18 Խանջյան Գ., նշված աշխ., էջ 5:

19 Абэ К. Женщина в песках (повести, рассказы, сцены). М., «Наука», 1987, с. 387.

20 Խանջյան Գ., նշված աշխ., էջ 191:

21 Նույն տեղում, էջ 362:

22 Խանջյան Գ., նշված աշխ., էջ 192:

իր մեջ խտացրել է տարբեր ժողովուրդների և մշակույթների աշխարհընկալման առանձնահատկությունները և, որ ավելի կարևոր է, իրարից անկախ ձևավորված ընդհանրությունները: Պատն այլևս չի կարելի ընկալել միակողմանիորեն՝ լոկ իբրև հուսահատության, անելանելիության, խոչընդոտի սիմվոլ: Այն առավել խորքային, կոլեկտիվ անգիտակցականում արմատակալած ենթաշերտեր ունի, որոնք, անշուշտ, պայմանավորված են հուսալքության և անելանելիության վերապրումով: Ինչպես վերոհիշյալ ստեղծագործությունների քննությունը ցույց տվեց, պատը ինքնաբացահայտման, գիտակից Եսի ձևավորման հնարավորություն է տալիս, այս աշխարհից անդին առկա կամ բացակա աշխարհի ճանաչման և, ընդհանրապես, արսուրդն ընկալելու ձգտում, ցանկության և իրականության, մարդու և մարդու բախում է խորհրդանշում և այլն:

**Պատի սիմվոլի բազմաշերտությունը և ընդհանուր ենթաշերտերի գերակայությունը տարբեր ժամանակաշրջաններում ապրած, տարբեր ազգությունների պատկանող հեղինակների ստեղծագործություններում, այս սիմվոլի՝ որոշակի ապրումների, հոգեվիճակների խտացում լինելու փաստը, թույլ են տալիս խոսել պատի մասին ոչ թե իբրև սիմվոլի, այլ էքզիստենցիալիստական արքենոիայի, որը տարբեր սիմվոլիկ պատկերների միջոցով է դրսևորվում:**

**Ռուզաննա Ռ. Ոսկանյան** – գիտական հետաքրքրությունների շրջանակը ժամանակակից գրականությունն է և գրաքննադատությունը: Ուսումնասիրում է 20-րդ դարի գրական-փիլիսոփայական ուղղության՝ էքզիստենցիալիզմի արձագանքներն ու դրսևորումները արդի հայ արձակում:

## Summary

### THE EXISTENTIAL INTERPRETATIONS OF THE SYMBOL OF THE WALL

In the works of J.-P. Sartre, K. Abe, L. Khechoyan and G. Khanjyan

Ruzanna R. Voskanyan

**Key words** – symbol of the wall, archetype, collective unconscious, existentialism, loneliness, absurdity, despair, God, personality, comparative analysis.

This article explores the symbol of the wall from the position of existentialism philosophy. The author uses comparative analysis to similar works entitled “The Wall” by J.-P. Sartre, K. Abe, L. Khechoyan and G. Khanjyan. The wall is investigated as symbol of despair, understanding of the meaninglessness of existence, the absurdity of life, loneliness, overcoming oneself and other realities. The fact that the symbol of the wall is used and interpreted almost identically



by the authors living in different time periods and in various countries, allows us to admit the archetype of the wall.

Резюме

### **ЭКЗИСТЕНЦИАЛЬНЫЕ ИНТЕРПРЕТАЦИИ СИМВОЛА СТЕНЫ**

В произведениях Ж.-П. Сартра, К. Абе, Л. Хечояна и Г. Ханджяна

Рузанна Р. Восканян

**Ключевые слова** – символ стены, архетип, коллективное бессознательное, экзистенциализм, одиночество, абсурд, отчаяние, Бог, личность, сравнительный анализ.

Данная статья посвящена анализу символа стены с позиции философии экзистенциализма. Сравнительному анализу подвергаются аналогичные работы с заглавием «Стена» Ж.-П. Сартра, К. Абе, Л. Хечояна и Г. Ханджяна. Стена исследуется как символ отчаяния, понимания бессмысленности существования, абсурдности бытия, одиночества, преодоления собственного я и других реальностей. Символ стены почти идентично используется и трактуется авторами, жившими в разные времена и в разных странах. Это дает возможность говорить об архетипе стены.